ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԵԴԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ՅՈԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆԻՆ, ԵԴԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Եդեմ

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին, լրացան ահա եօթանասուն և հինգ տարիները Եդեմի Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցիին կառուցման և օծման:

Ամերիկայի հիւրընկալ հողին վրայ բարձրացած այս եկեղեցին մշտավառ ջահի նման ահա ուղիղ երեք քառորդ դարէ ի վեր, Քրիստոսի Աւետարանի լոյսն ու շնորհները առատօրէն կը բաշխէ ձեզի բոլորիդ, ի մխիթարութիւն ձեր հոգիներուն և ի շինութիւն ձեր կրօնական ու մշակութային կեանքին, պահպանումովը մեր նախնեաց քրիստոնէական սուրբ աւանդութիւններուն:

Յոբելեան մըն է այս, որ կը հանդիսանայ մեր հեռաւոր վաւակներուն ոգեկան յաղթանակներէն մին, ամերիկայի հիւրընկալ ու մարդասէր ժողովուրդի ծոցին մէջ: Յոբելեան մը, որ ճշմարիտ աւետիս մըն է նաև համայն մեր Եկեղեցիին և յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Այս երջանիկ առիթով անհունօրէն մխիթարուած և ընդառաջելով թեմիդ բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի դիմումին, ձեզի ամենուդ կը յղենք Մեր հայրապետական օրհնութիւնը և ջերմագին մաղթանքները, որ Տէրը միշտ անսասան ու լուսառատ պահէ ձեր աղօթքի Տաճարը և անոր սուրբ Սեղանէն միշտ երկնային շնորհներն առատօրէն բաշխուին ձեզի բոլորիդ, ձեր կաւակներուն և գալիք սերունդներուն, ի փառս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

«Թագաւոր երկնաւոր, կեկեղեցի քո անշարժ պահեա և երկրգապուս անուանդ քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»: Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 7 Հոկտեմբերի
1985 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԴ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1381